ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅՈԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 33 - 34 (16428) ՈՒՐԲԱԹ, 29 ԱՊՐԻԼԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ

Եվրախորհրդարանի քաղաքացիական ազատության, արդարադատության եւ ներքին գործերի կոմիտեները պաշտպանեցին Վրաստանի քաղաքացիների համար անայցեգրային պայմանակարգի շնորհման մասին եվրահանձնաժողովի օրենսդրական առաջարկությունը:

Նախ, եվրապատգամավորները լսեցին եվրահանձնաժողովի ներկայացուցիչների ելույթները, որով ներկայացվեց եվրահանձնաժողովի տեխնիկական եզրակացությունը:

Եվրապատգամավորների առջեւ ելույթ ունեցավ Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին, որը մանրամասն խոսեց Եվրամիության հետ այցեգրերի ազատականացման ուղղությամբ Վրաստանում իրականացված միջոցառումների մասին:

Եվրահանձնաժողովը պաշտպանեց անայցեգրային պայմանակարգի շնորհումը Վրաստանի այն քաղաքացիներին, ովքեր ունեն կեն-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՏԱՐԵԼ Է ԱՅՑԵԳՐԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Ֆրանսիայում:

Այցի շրջանակներում ֆրանսիական RFI ռադիոկայանին տված հարցազրույցում, նախագահը հայտարարեց, որ Վրաստանը կատարել է համաքաղաքացիական անձնագրերի հանձնման արարողության հետ կապված բոլոր պայմանները, հետեւաբար պետք է արագացվի երկրի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԱՄՆ

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, ապրիլի 20-29-ը, աշխատանքային այցով գտնվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Այցի շրջանակներում Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպում ունեցավ ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենի, Համաշխարհային բանկի նախագահ Ջիմ Իոնգ Կիմի, Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր փոխտնօրեն Մին Ժույի, Միացյալ Նահանգների Սենատի եւ Ներկայացուցիչների պալատի անդամների հետ: Վրաստանի վարչապետն այցի շրջանակներում հանդիպում ունեցավ նաեւ ամերիկյան բիզնես շրջանների եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ելույթ ունեցավ ԱՄՆ-ի խաղաղության ինստիտուտում եւ Իլինոյիսի համալսարանում, հանդիպեց Բոստոնում սովորող վրաց ուսանողների հետ:

Վրաստանի վարչապետի եւ ԱՄՆ փոխնախագահի հետ հանդիպմանը, կողմերը խոսեցին պաշտպանության եւ անվտանգության ոլորտում համագործակցության խորացման հարցի շուրջ: «ԱՄՆ փոխնախագահ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ»

Աբխազիայի եւ Ցխինվալիի երկրամասի հետ կապված տարածքային վեճերի ռազմական լուծում գոյություն չունի:

Այդ մասին Վաշինգտոնում, խաղաղության ինստիտուտում հայտարարեց Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլին:

«Կարծում եմ՝ պարգմատիկ մոտեցումն աշխատում է, որովհետեւ մեզ հաջողվել է խուսափել Վրաստանի անվտանգության հետ կապված իրադրության հետագա վատացումից: Մեզ հարկավոր է կառուցողական լինել, որպեսզի մեր հարեւաններին չհրահրենք նոր հակամարտությունների, որովհետեւ այդ հակամարտությունը ռազմական լուծում չունի, օկուպացիայի հետ կապված մեր խնդիրների ռազմական լուծում չկա»,- նշեց նա:

Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքերով, այժմ Թբիլիսին հնարավորություն ունի բանակցու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 101

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը՝ տիկնոջ Ռիտա Սարգսյանի հետ, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեց 1915թ. Օսմանյան Թուրքիայի իրականացրած ոճիրի՝ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Հայաստանի ղեկավարի հետ Ծիծեռնակաբերդի բարձունք էին եկել նա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

«ԸՆԴԴԵՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ» ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈԲԱԼ ՖՈՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ապրիլի 23-ին Երեւանում անցկացվեց «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երկրորդ գլոբալ ֆորումը: Այն հիմնականում կենտրոնացված էր ցեղասպանություն վերապրած կենդանի անձանց եւ փախստականների խնդիրների վրա:

Գլոբալ ֆորումն ուներ չորս հիմնական բաժիններ: Ֆորումը պաշտոնապես բացեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

Հայաստանի ղեկավարը իր խոսքում ընդգծեց, որ ցեղասպանություն իրականացնողների կամ նրանց ժառանգների կողմից ժխտողականության ալիքը ամենամեծ հարվածն է վերապրածների

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ապրիլի 24-ին մարդկանց հոսքը դեպի Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եւ Սուրբ Էջմիածին եկեղեցիներ սկսվեց դեռեւս վաղ առավոտյան՝ մասնակցելու եկեղեցում մատուցվող Երեւման Սուրբ Խաչի տոնի եւ Հայոց Ցեղասպանության Սուրբ նահատակների հիշատակին մատուցվող Սուրբ եւ Անմահ պատարագին:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵՑ «ՄԵԾ ԵՂԵՌՆ» ԵԶՐՈՒՅԹԸ

Սպիտակ տան մամլո քարտուղարությունը հրապարակել է ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հայտարարությունը Հայոց ցեղասպանության ոգեկոչման օրվա առթիվ: Հայտարարությունում, մասնավորապես, ասված է.

«Այսօր հանդիսավոր կերպով ոգեկոչում ենք 20-րդ դարի առաջին զանգվածային վայրագության՝ Հայոց Մեծ եղեռնի հիշատակը, երբ միլիոն ու կես հայերի տեղահանել, կոտորել եւ արտաք-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՋՈՐՋ ՔԼՈՒՆԻ. «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅԵՐԻ, ԱՅԼԵՎ ՈՂՋ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՑԱՎՆ Է»

Հայոց ցեղասպանությունը հայ ժողովրդի պատմության մի մասն է, սակայն այն ոչ միայն հայության, այլեւ ամբողջ մարդկության ցավն է: Այս մասին ասաց հոլիվուդյան աշխարհահռչակ դերասան Ջորջ Քլունին:

«Մենք տեսնում ենք, որ բավականին երկարատեւ պայքար է գնում, որպեսզի հնարավոր լինի հասնել այն բանին, որ իրերը կոչվեն իրենց անուններով: Մենք տեսնում ենք, որ հայերի կո-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

սաչափական անձնագիր:

Եվրախորհրդարանի կողմից վերոնշյալ առաջարկության աջակցության դեպքում, Վրաստանի եւ Եվրամիության միջեւ կհաստատվի 90-օրյա անայցեգրային պայմանակարգ: Նշենք, որ սույն հարցը Եվրախորհրդարանի լիագումար նիստում, առաջին ընթերցմամբ, կքննարկվի ընթացիկ տարվա մայիսին, ապա այն կփոխանցվի Եվրամիության նախարարների խորհրդին: Այդ երկու մարմինների կողմից աջակցության դեպքում, փոփոխություններով հանդերձ, կարգավորման տեքստը կհրապարակվի, որից քսան օր անց կստանա օրինական ուժ: Ամենայն հավանականությամբ, Վրաստանի քաղաքացիների համար անայցեգրային պայմանակարգը ուժի մեջ կմտնի 2016 թվականի հուլիսի 15-ից:

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՏԱՐԵԼ Է ԱՅՑԵԳՐԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քաղաքացիների համար Եվրոպայով տեղաշարժման անայցեգրային կարգավիճակի շնորհումը:

Նախագահը նշեց նաեւ, որ Եվրամիության հետ հարաբերությունների խորացմանը զուգընթաց, Վրաստանի համար կարեւոր նշանակություն ունի նաեւ ՆԱՏՕ-ի հետ երկկողմ հարաբերությունները: Գիորգի Մարգվելաշվիլին ընդգծեց, որ 2014 թվականին Վրաստանին շնորհվել է ՆԱՏՕ-ին ամենահարմար զինված ուժեր ունեցող երկրի կարգավիճակ եւ, որ վրաց զինվորականները մասնակցում են Աֆղանստանում ՆԱՏՕ-ի գործողություններին եւ Կենտրոնական Աֆրիկայում Եվրամիության առաքելությանը:

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԱՄՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ջոզեֆ Բայդենի հետ հետաքրքիր հանդիպում ունեցա: Նա Վրաստանին մեծապես աջակցում է: Մենք խոսեցինք անցած 25 տարիների ընթացքում մեր գործընկերության մասին եւ հաջորդ 25-ամյակի հարցով համագործակցության հեռանկարների մասին»,- հանդիպման ավարտին հայտարարեց Վրաստանի վարչապետը:

Վրաստանի վարչապետի եւ ամերիկյան կոնգրեսականների հետ հանդիպմանը կողմերը քննարկեցին վրաց-ամերիկյան հարաբերությունների, Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրման գործընթացին նվիրված հարցեր, առանձնակի ուշադրություն հատկացնելով հարաբերությունների զարգացման հեռանկարներին: Հանդիպմանն առանձնակի ուշադրություն հատկացվեց տարածաշրջանում ստեղծված իրավիճակին եւ գլոբալ անվտանգության հարցերին: Անդրադարձ կատարվեց նաեւ Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակի վրա:

ԱՄՆ-ում աշխատանքային այցի ընթացքում Վրաստանի վարչապետին ուղեկցում էին Վրաստանի ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն, էկոնոմիկայի նախարար Դմիտրի Քումսիշվիլին, խորհրդարանի արտաքին կապերի կոմիտեի նախագահ Թեդո Ջափարիձեն:

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյուններ վարել Ռուսաստանի հետ, այդ թվում՝ ՌԴ ԱԳ նախարարության ներկայացուցիչների եւ Վրաստանի վարչապետի գրասենյակի միջոցով: «Մենք պետք է պահպանենք այդ ձեւաչափերը»,- ասաց Վրաստանի վարչապետը:

Գիորգի Կվիրիկաշվիլին ընդգծեց, նաեւ, որ այժմ երկրի իշխանությունները աշխատում են Վրաստանն «ավելի գրավիչ» դարձնել Աբխազիայի եւ Ցխինվալիի երկրամասի բնակիչների համար: «Մենք տեսնում ենք, որ սառույցը հալվում է»,- հավելեց Վրաստանի վարչապետը:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

ԿՈՄԻՏԵՆ ՊԱՇՏՊԱՆԵՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Վրաստանի խորհրդարանի իրավաբանական կոմիտեն պաշտպանեց ընտրական համակարգում իրականացվելիք սահմանադրական փոփոխությունների՝ խորհրդարանական մեծամասնության կողմից մշակած նախագիծը:

Վերոնշյալ օրինանախագիծը նախատեսում է մեծամասնական ընտրահամակարգի վերացում եւ բազմամանդատ համամասնական համակարգի կիրարկում: Օրինանախագծով ծրագրված է նաեւ ընտրական արգելագիծը 5-ից մինչեւ 4 տոկոսի նվազեցումը: Համաձայն օրինանախագծի, ընտրական նոր համակարգի ներդրումը ծրագրված է 2016 թվականի ընտրություններից հետո անցկացվելիք ընտրությունների ժամանակ:

Նշենք, որ վերոնշյալ սահմանադրության փոփոխության նախաձեռնությամբ դեռեւս անցյալ տարվա սեպտեմբերին հանդես էր եկել խորհրդարանական մեծամասնությունը: Ինչպես նշեց իրավաբանական կոմիտեի նախագահ Վախթանգ Խմալաձեն, օրինանախագծի քննարկումները ցույց տվեցին, որ խորհրդարանի պատգամավորների մի մասը չի պաշտպանում մեծամասնական համակարգի վերացման առաջարկությունը:

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 101

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՁՈՀԵՐԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը, համայնքային գործիչներ, մտավորականներ, հավատացյալներ:

Պատարագիչ՝ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց օրվա խորհրդի մասին, անդրադառնալով Սուրբ խաչի երեւմանը եւ կենարար խաչի մշտամնա զորությանն ու պահպանիչ ուժին:

Առաջնորդը հայցեց Հայոց ցեղասպանության Սուրբ նահատակների բարեխոսությունը հայ ժողովրդի, հայրենիքի ու նրա սահմանները պաշտպանող հայ զինվորի համար:

Մայրաքաղաքի Հավլաբարի թաղամասում գտնվող Սուրբ էջմիածին եկեղեցում, կիրակնօրյա Սուրբ եւ Անմահ պատարագից հետո, եկեղեցու բակում կանգնեցված Ցեղասպանության հիշատակի խաչքարի մոտ, հոգեշնորհ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանի նախագահությամբ կատարվեց հատուկ արարողություն, ոգեկոչելու Հայոց ցեղասպանության Սուրբ նահատակների հիշատակը:

Այնուհետեւ Սուրբ էջմիածին եկեղեցու հարակից տարածքում թբիլիսահայությունն իր մասնակցությունը բերեց Հայոց Ցեղասպանության 101-րդ տարելիցին նվիրված հանրահավաքին:

Օրհնության խոսքով դիմելով հանրահավաքի մասնակիցներին, Վիրահայոց թեմի առաջնորդի օգնական Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանը ապրիլի 24-ը անվանեց հայության համար ուխտի օր:

Հանրահավաքին, որ ընթանում էր հայերեն եւ վրացերեն լեզուներով, ելույթ ունեցողները դատապարտման, ճանաչման եւ հատուցման կոչով դիմեցին հավաքվածներին:

Ապրիլի 24-ին հիշատակի պատարագներ, ջահերով երթեր, հանրահավաքներ անցկացվեցին Բաթումիում, Ախալքալաքիում, Նինոծմինդայում, Վրաստանի հայաբնակ մյուս վայրերում:



ԱՄՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՄՆՈՒՄ ԵՆ ՈՒԺԻ ՄԵՋ

ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման հայտարարել է, որ Ռուսաստանի դեմ սահմանված միջազգային պատժամիջոցները պետք է ուժի մեջ մնան այնքան ժամանակ, քանի դեռ նա չի կատարել Մինսկի համաձայնությունները: «Ես լավ հարաբերություններ եմ ցանկանում Ռուսաստանի հետ, եւ շատ բան եմ ներդրել Ռուսաստանի հետ հարաբերություններում, բայց մենք պետք է նրա դեմ պատժամիջոցները թողնենք ուժի մեջ, քանի դեռ Ռուսաստանը լիովին չի կատարել Մինսկի համաձայնությունները»,- ասաց Օբաման:

ՍԻՐԻԱ

ՈՉՆՉԱՑՎԵԼ Է ԻՊ-Ի 800 ՄԻԼԻՈՆ ԿԱՆԽԻԿ ԳՈՒՄԱՐԸ

«Իսլամական պետություն» (ԻՊ) ծայրահեղական խմբավորման զավթած զանազան օբյեկտների ռմբակոծման ընթացքում շուրջ 800 միլիոն դոլար կանխիկ գումար է ոչնչացվել: Այդ մասին հայտնել է Իրաքում ԱՄՆ-ի զինվորական հրամանատարության ներկայացուցիչ Փիթեր Գերստենը:

Նա ընդգծել է, որ ԱՄՆ-ի օդուժը բազմիցս հարվածներ է հասցրել այն շենքերին, որտեղ խմբավորումը կանխիկ գումար էր պահում: Գեներալը չի պարզաբանել, թե ամերիկացի զինվորականներին որտեղից է հայտնի, թե հատկապես որքան փող է ոչնչացվել:

Փիթեր Գերստենը նաեւ նշել է, որ ծայրահեղականների կողմից այդ միջոցների կորուստը հանգեցրել է նրանց շարքերում դասալքության կտրուկ աճի՝ մոտավորապես մինչեւ 90 տոկոս, ինչպես նաեւ նորակոչիկների թվի անկման:

Ինչպես նշում է BBC-ն, ստույգ հայտնի չէ, թե հատկապես որքան է «Իսլամական պետության» բյուջեն: Մոտավոր տվյալներով, այն գնահատվում է 2 միլիարդ դոլար եւ անցյալ տարի ավելացել է եւս 250 միլիոն դոլարով:

ՍԵՐԲԻԱ

ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սերբիայում ապրիլի 24-ին կայացած խորհրդարանական ընտրություններում մեծ առավելությամբ հաղթանակ է տարել «Ալեքսանդր Վուչիչ- Սերբիան հաղթում է» կոալիցիան, որը ձեւավորվել է կառավարող Սերբիայի առաջադիմական կուսակցության (ՍԱԿ) շուրջ, որը գլխավորում է վարչապետ Ալեքսանդր Վուչիչը: Կոալիցիան ստացել է ձայների 49,30 տոկոսը:

5-տոկոսանոց արգելքը հաղթահարում են եւս երեք կուսակցական ցուցակներ՝ Իվիցա Դաչիչի գլխավորած Սերբիայի սոցիալիստական կուսակցության շուրջ ձեւավորված կոալիցիան, որը հավաքել է ձայների 12,10 տոկոսը, Սերբիայի արմատական կուսակցությունը՝ Վոիսլավ Շեշելի գլխավորությամբ (7,94 տոկոս), «Հանուն արդար Սերբիայի-Դեմոկրատական կուսակցություն» ընդդիմադիր կոալիցիան (6,13 տոկոս):

ՖՐԱՆՍԻԱ

ՀԱՐՁԱԿՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ապրիլի 23-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում Թուրքիայի հյուպատոսության շենքի վրա հարձակում է տեղի ունեցել:

Երկու անհայտ անձինք «Մոլոտովի կոկտեյլ»-ի (դյուրավառ հեղուկով լի) շշեր են նետել հյուպատոսության շենքի վրա, որոնցից մեկը դիպել է թուրքական դրոշը պահող ձողին, ինչի արդյունքում դրոշը մասնակի այրվել է:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵԵՆԿՈ. «ՀԱՃԱԽ ԲԺԻՇԿՆԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳՐՈՒՄ ՊԱՀԱՆՋԱՐԿԻՑ ԱՎԵԼԻ ԴԵՂԵՐ, ՈՐՈՆՔ ԻՄԻՋԻԱՅԼՈՑ, ԲԱՎԱԿԱՆԻՆ ԹԱՆԿ ԵՆ»

Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեեենկոյի հավաստմամբ, բժիշկների մի մասը հիվանդների համար նշանակում է պահանջարկից ավելի դեղորայք, որոնք, իմիջիայլոց, բավականին թանկ են:

Դավիթ Սերգեեենկոն նշեց, որ «Դեղորայքի թանկությունը մեզ համար ամենանշանակալից հիմնախնդիրն է»:

«Առողջապահության ոլորտում ծախսված գումարների մեծ մասը՝ շուրջ 40-50 տոկոսը բաժին է ընկնում դեղորայքին: Առողջապահության զարգացած համակարգերում դեղորայքի վրա ծախսվում է հատկացված գումարների 15-25 տոկոսը: Մենք ծախսում ենք կրկնակի ավելի, քանի որ հաճախ բժիշկները հիվանդների համար նշանակում են պահանջարկից ավելի դեղորայք, որոնք բավականին թանկ են: Ելնելով զարգացած երկրների փորձից, կա վերոնշյալ հիմնախնդրի կարգավորման երեք ուղի: Նախ՝ պետությունը դեղագործական ընկերությունների համար ներդնում է շահութաբերություն, այսինքն՝ սահմանափակում է գործառնությունը: Երկրորդ՝ պետությունը սկսում է սուբսիդավորումը եւ բնակչության համար գնում դեղորայք: Երրորդը՝ պետությունը ներդնում է կարգավորման համակարգ, որը թույլ կտա վերահսկել ներկրվող եւ տեղական արտադրանքը, շուկան դարձնել մատչելի այլ ընկերությունների համար»,- հայտարարեց առողջապահության նախարարը:

ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում մասնակցեց արդարադատության նախարարների եւ դատական համակարգի ղեկավարների, «Եվրամիության անդամ երկրներում օրենքի գերակայության համար դատական համակարգի անկախության եւ անկողմնակալության ամրապնդման» գիտաժողովին:

Իր ելույթում, Թեա Ծուլուկիանին անդրադարձավ Վրաստանում իրականացվող իրավական բարեփոխումների հարցին: Նա խոսեց դատական համակարգի բարեփոխման առաջին եւ երկրորդ ալիքների մասին, անդրադարձ կատարեց դատախազության, անչափահասների դատավարության, բարեփոխման անդրանիկ փուլին, նշելով, որ դրանք իրականացման ընթացքում են եւ ներկայումս երկրում մեկնարկել է դատական բարեփոխման երրորդ փուլը:

«Հուսով եմ, որ խորհրդարանը մոտ ժամանակներում կհաստատի մեր կողմից մշակած բարեփոխման երրորդ փուլը, ինչն ուղղված է դատավորների անհատական ուժեղացմանը, գործերի էլեկտրոնային քննարկման ներդրմանը եւ դատական գործերին չմիջամտելու գործընթացի ապահովմանը: Մենք ընդգծում ենք այն փաստը, որ կառավարությունը իրավական ոլորտում իրականացնում է հավակնորդ բարեփոխումներ, որի միակ նպատակն է ուժեղացնել ինստիտուցիոնալ ժողովրդավարությունը»,- գագաթաժողովում հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

Վրաստանում հնարավոր է ընդունվի համաներում 65 եւ ավելի տարիքի բանտարկյալների համար: «Համաներման մասին նոր օրենքի նախաձեռնությամբ հանդես է եկել ազգային ֆորումը:

Օրինանախագիծը նախատեսում է ազատություն շնորհել 70-ից բարձր տղամարդկանց եւ 65-ից բարձր կանանց համար, եթե նրանք չեն դատապարտվել սպանության, մարմնական ծանր վնասվածքներ հասցնելու համար կամ չեն գործել իրավախախտում, կապված միջուկային նյութերի, թմրանյութերի եւ ահաբեկչության հետ:

Համաներումը չի անդրադառնա մարդկանց կտտանքներում մեղադրյալներին, միջազգային հումանիտար իրավունքի դեմ կատարած իրավախախտողներին, բանտերից փախուստ կատարածներին եւ Վրաստանի պետական սահմանն ապօրինի անցած անձանց:

ՆՈՐ ՏԻՊԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ 14-21 ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

14-21 տարեկան բանտարկյալների համար ծրագրվում է նոր տիպի հատուկ հաստատության շինարարություն:

Ինչպես հայտարարեց քրեակատարողական եւ պրոբացիայի նախարար Կախա Կախիաշվիլին, հաստատության նախագիծն արդեն ավարտվել է եւ մոտ ժամանակներում կսկսվի դրա շինարարությունը: «14-ից մինչեւ 21 տարեկան բոլոր բանտարկյալները կտեղակայվեն այդ հաստատությունում: Հատկանշական է, որ 18-21 տարեկան բանտարկյալներն ավելի ցածր տարիքի տղաների հետ չեն առնչվի: Նրանք կգտնվեն տարբեր մասնաշենքերում: Թեպետ բոլորի նկատմամբ մոտեցումը կլինի միասնական՝ հաստատությունում կգործի դպրոց, մասնագիտական ուսումնարան, կգործեն օտար լեզվի դասընթացներ եւ այլն: Նրանց կտրվի հաստատությունում նորմալ կրթություն ստանալու հնարավորություն»,- հայտարարեց նախարարը եւ հավելեց, որ միաժամանակ ծրագրվում է նաեւ այնպիսի նոր տիպի հաստատության հիմնում, որտեղ կտեղակայվեն նվազ ռիսկի իրավախախտողները՝, որոնց պատժամիջոցին մնացել է վեց ամիս: Կախա Կախիաշվիլու խոսքերով, նոր հաստատությունը բանտարկյալներին նախապատրաստելու է հասարակությունում ապրելու համար, հետեւաբար այն կկոչվի ազատ արձակվածների նախապատրաստման հաստատություն:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ

Առավել խոշոր չափերի պետբյուջեի յուրացման մեղադրանքով, ձերբակալվել է Բաղդադի մունիցիպալիտետի վարչության նախագահ Իրակլի Գեգեշիձեն:

Ինչպես տեղեկացրին Վրաստանի պետական անվտանգության ծառայությունից, խոսքը վերաբերում է պայմանագրային ընկերությանը տրված գումարին՝ անորակ ասֆալտապատման աշխատանքների իրականացման համար:

Հետաքննությամբ պարզվել է, որ 2015 թվականի փետրվարի 26-ին Բաղդադի մունիցիպալիտետում անցկացվել է Բաղդադի-Զեգանի-Սակրուալա ճանապարհահատվածի վերանորոգման աշխատանքների մրցույթ, որտեղ հաղթող է ճանաչվել «Քվենիպնելի» ՍՊԸ-ն: Բաղդադի մունիցիպալիտետը ապրիլի 20-ին այդ ընկերության հետ կնքել է պայմանագիր եւ փոխանցել աշխատանքների համար նախատեսված 950 հազար լարի: Սակայն ընկերությունը անորակ է կատարել աշխատանքը, ինչը ապացուցվել է փորձաստուգմամբ: Չնայած փորձաստուգման եզրակացության, Իրակլի Գեգեշիձեն միանձնյա, շրջանցելով ընդունող հանձնաժողովին, իրականացրել է կատարված աշխատանքների ընդունումը եւ վերոնշյալ ՍՊԸ-ին փոխանցել մնացած 227654 լարի գումարը: Հենց այդ գումարն էլ համարվում է ապօրինի յուրացված:



ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ԶԱՏԿԱԿԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Զատկական տոնի առթիվ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ներում է շնորհել 95 բանտարկյալների: Ինչպես հայտարարեց ներման հանձնաժողովի նախագահ Զվիադ Քորիձեն, համապատասխան հրամանագիրը նախագահը ստորագրել է ապրիլի 27-ին:

Նույն օրը բանտից ազատ արձակվեցին 69 բանտարկյալներ, որոնցից 10-ը կանայք էին եւ երկուսը՝ անչափահաս: Քսանվեց բանտարկյալների, այդ թվում երկու կանանց եւ երկու անչափահասների՝ պատժաժամկետը նվազեցված է:

ԱՓՍՈՍԱՆՔ ԱՅՑԻ ՀԵՏԱՁԳՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հետ հեռախոսազրույցում ափսոսանք է հայտնել այն կապակցությամբ, որ իր այցը Վրաստան հետաձգվում է: Պան Գի Մունը պատրաստակամություն է հայտնել տարվա ընթացքում անպայման լինել Վրաստանում, ծանոթանալ երկրում իրականացվող բարեփոխումների ընթացքին: Ընդսմին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն ընդգծել է, որ այդ առումով Վրաստանը օրինակելի է մյուս երկրների համար: Գիորգի Կվիրիկաշվիլին պատրաստակամություն է հայտնել բարձրաստիճան հյուրին Վրաստանում դիմավորել նրան հարմար ցանկացած ժամանակ:

ՎԱԼԵՑԻՆԵՐԸ ԾԱՆՐԱՔԱՇ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Ախալցիխեի շրջանի Վալե քաղաքի երկրորդ հանքի թաղամասի բնակիչները շրջափակել են ճանապարհը եւ պահանջել շտապ կարգով վերանորոգել 600 մետրանոց ճանապարհահատվածը: Ինչպես նշեցին տեղացիները, այդ ճանապարհով չի դադարում ասֆալտբետոնե ուղեւորվող ծանրաքաշ մեքենաների երթեւեկությունը, ինչը հանգեցրել է ճանապարհի վնասմանը: Արդյունքում ողջ թաղամասը ծածկվում է փոշով: Տեղի բնակիչների հետ հանդիպում ունեցավ Ախալցիխեի մունիցիպալիտետի վարչության նախագահ Զազա Միքելաձեն: Նա խոստացավ ճանապարհի հարցը կարգավորել 2017 թվականին:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԾԽԵԼՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարությունը մշակում է կարգավորիչներ, ըստ որի հասարակական մարդաշատ վայրերում ծխելը լրիվությամբ կարգելվի: Նոր կարգավորումները պահանջում են ավելի քան հարյուր հարցերի հստակեցում:

«Ծխախոտի վերահսկողության ալյանսի» ներկայացուցիչ Թեմուր Ալասանիան դրական է գնահատում ծրագրած փոփոխությունները: «Մենք արդեն վաղուց սպասում ենք հասարակական վայրերում ծխելը լրիվությամբ արգելելու օրենսդրությանը եւ դրա կատարման մեխանիզմների ներդրմանը»,- հայտարարեց նա:

ՄԵԾ ԵՂԵՌՆ - 101

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

եւ աշխարհահռչակ հայ շանսոնյե Շառլ Ազնավուրը, հոլիվուդյան դերասան Ջորջ Քլունին, «Ավրորա» մրցանակաբաշխության հավակնորդներն ու մասնակիցները, «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երկրորդ գլոբալ ֆորումի մասնակիցները, այդ թվում՝ Վրաստանի պատվիրակության անդամներ, խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, Հայաստանում Վրաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Մալխազ Մալաշխիան, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

Ծիծեռնակաբերդի անմար կրակի մոտ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիսապետությամբ հոգեհանգստյան պաշտոն կատարեց հոգեւոր դասը, հավաքվածները գլուխ խոնարհեցին եւ մեկ րոպե լռությամբ հարգեցին սպանված 1,5 միլիոն հայերի հիշատակը:

«ԸՆԴԴԵՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ» ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈԲԱԼ ՖՈՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



համար: «Ինչպես իրավացիորեն ասել է Հոլոքոստը վերապրած Նոբելյան մրցանակակիր էլի Վիզելը՝ «Ժխտել՝ նշանակում է սպանել զոհերին երկրորդ անգամ»: Առանձին դեպքերում ժխտողականությունը դրսեւորվում է նաեւ հիշելու եւ իմանալու իրավունքների ոտնահարմամբ»,- հայտարարեց Սերժ Սարգսյանը եւ հավելեց. «Միաժամանակ, կարծում եմ ցեղասպանություն հանցագործության հետ կապված միջազգային իրավական փաստաթղթերը բավարար ուշադրության չեն արժանացնում վերապրածների խնդիրների միջազգային իրավական կարգավորումներին: Նույնը կարելի է ասել նաեւ փախստականների հետ կապված միջազգային իրավական ռեժիմի մասին: Կարեւոր է հասկանալ, թե առկա իրավական մեխանիզմների կատարելագործման կամ նորերի ներմուծման միջոցներով ինչպես է հնարավոր իրավաբանորեն ամրագրել ցեղասպանություն կամ մարդկության դեմ հանցագործություններ վերապրածների առանձնահատուկ կարգավիճակը, առանց որի թերեւս անհնար է համակարգված ձեւով մոտենալ խնդրի լուծմանը»:

ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵՑ «ՄԵԾ ԵՂԵՌՆ» ԵԶՐՈՒՅԹԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

սել են Օսմանյան կայսրության վերջին օրերին:

Հարգելով 1915-ի մռայլ օրերին տուժած մարդկանց հիշատակը եւ պարտավորվելով սովորել այս ողբերգությունից, որպեսզի այն երբեւէ չկրկնվի՝ հարգանքի տուրք ենք մատուցում նաեւ նրանց օգնության հասած մարդկանց, որոնց թվում էր ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն, ով իր ձայնը բարձրացրեց՝ փորձելով վերջ դնել բռնությանը: Նման ձայները, ինչպիսին Մորգենթաուինն է, շարունակում են կարեւոր լինել վայրագությունների կանխման գործում:

Սա նաեւ հայ ժողովրդի ճկունությունը գնահատելու պահն է: Մենք հիշում ենք, թե ինչպես են հազարավոր հայ փախստականներ տասնյակ տարիներ առաջ նոր կյանք սկսել Միացյալ Նահանգներում՝ կազմելով կենսունակ ու զարգացած համայնք: Մենք շնորհակալ ենք նաեւ Հայաստանի ժողովրդին 17 հազար սիրիացի փախստականների իրենց երկրում ընդունելու համար:

Անցյալից նայելով ապագային՝ մենք շարունակում ենք կարեւորել պատմական հիշողությունը՝ որպես կանխման միջոց, եւ կոչ ենք անում փաստերի ամբողջական ու ազնիվ ճանաչման, ինչը կծառայի բոլոր կողմերի շահերին: Ես հետեւողականորեն հայտնել եմ իմ սեփական տեսակետը 1915-ին տեղի ունեցածի վերաբերյալ, եւ իմ տեսակետը չի փոխվել:

Մենք ողջունում ենք այն մարդկանց տեսակետները, ովքեր փորձում են նոր լույս սփռել անցյալի մթության վրա՝ սկսած հայ եւ թուրք պատմաբաններից մինչեւ Ֆրանցիսկոս պապը:

Այսօր մենք կանգնած ենք հայ ժողովրդի կողքին՝ ողջ աշխարհում հիշելով Մեծ եղեռնի սարսափը եւ վերահաստատելով մեր աջակցությունը ժողովրդավար, խաղաղ եւ բարգավաճող Հայաստանին»:

ՋՈՐՋ ՔԼՈՒՆԻ. «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅԵՐԻ, ԱՅԼԵՎ ՈՂՋ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՑԱՎՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տորածները ցեղասպանություն որակելու առումով քայլեր արվում են, սակայն արվում են ավելի դանդաղ, այդ պայքարն ավելի երկար է շարունակվում, քան պետք է լիներ»,- նշեց Քլունին:

Քլունին շեշտեց, որ անհնար է հերքել այն, ինչ տեղի է ունեցել, իսկ 1915թ. հայ ժողովրդի նկատմամբ տեղի ունեցածը ցեղասպանություն է: «Գիտեք, Հոլոքոստից հետո անընդհատ լսել ենք «այլեւս երբեք» արտահայտությունը, սակայն դրանից հետո եղել են Ռուանդայի, Կամբոջայի, Բոսնիայի, Դարֆուրի ցեղասպանությունները»,- ասաց Քլունին:

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ - ՈՒՄ, ՈՐՔԱՆ ԲԱԺԻՆ ԿՀԱՍՆԻ

Կենսաթոշակային բարեփոխման մոդելն արդեն հայտնի է: 2018 թվականից կկիրարկվի կուտակումային համակարգը, որի շրջանակներում քաղաքացին կենսաթոշակային հիմնադրամ կփոխանցի իր աշխատավարձի 2 տոկոսը, եւս 2-ական տոկոս հիմնադրամ կփոխանցեն գործատուն եւ պետությունը: Հստակեցված է նաեւ այն, որ բազիսային կենսաթոշակը փոփոխվելու է արժեզրկման մակարդակից ելնելով: Եթե հաշվի առնենք վերջին տարիների արժեզրկման ցուցանիշը, ապա ստացվում է, որ կենսաթոշակի ամենամյա ավելացումը կտատանվի 5-7 լարիի սահմաններում:

Կառավարությունում վստահ են, որ կուտակումային կենսաթոշակային համակարգը առավել լավ կապահովի կենսաթոշակառուներին, թեպետ առանձին մասնագետներ գտնում են, որ սույն համակարգը իրեն չի արդարացնի: Ավելին, նրանք կառավարությանը խորհուրդ են տալիս հրաժարվել «ուրիշի փողերը բաժանելուց»:

Կուտակումային կենսաթոշակային բարեփոխման սկզբունքը հետեւյալն է. համակարգին մասնակցել ցանկացող վարձով աշխատող անհատը կոնտրիբուցիայի տեսքով աշխատավարձից առանձնացնում է 2 տոկոսը, իսկ մնացած 2-ական տոկոսը փոխանցում են գործատուն եւ պետությունը: Քաղաքացին այդ գումարից կարող է օգտվել կենսաթոշակային տարիքին հասնելուց հետո, թեպետ սահմանված են նաեւ բացառությունները:

«Ընդհանուր առմամբ, հիմնադրամ կփոխանցվի 6 տոկոսը: Այդ գումարը հարկադրման ենթակա չէ: Հետագայում այդ գումարը կներդրվի էկոնոմիկայում: Այդ ներդրումներից կստացվի շահույթ, որի շնորհիվ գումարը որոշակի աճ կունենա ինչպես ամսվա, այնպես էլ՝ տարվա շրջանակներում: Քաղաքացին այդ գումարից կարող է օգտվել, երբ կհասնի կենսաթոշակային տարիքին»,- հայտարարեց էկոնոմիկայի նախարարության կենսաթոշակային բարեփոխման դեպարտամենտի ղեկավար Օթար Չիծիկաշվիլին:

Ինչ վերաբերում է ներկայիս կենսաթոշակառուներին, ապա նրանց կենսաթոշակի չափը կավելանա ամենամյա նվազագույն արժեզրկման մակարդակին համապատասխան:

«Վերոնշյալ բարեփոխումը կազմված է երկու նշանակալի բաղադրիչներից: Առաջին բաղադրիչը առնչվում է ներկայիս կենսաթոշակառուներին: Մեր նպատակն է որոշակիորեն բարելավել նրանց սոցիալական իրավիճակը, հետեւաբար ներդնում ենք մեխանիզմ, որն ամրացնելու է կենսաթոշակի սոցիալական գործառույթը: Մեր հիմնադրույթի համաձայն, կմշակվի ինդեքսացիայի մեխանիզմ, եւ կենսաթոշակն ամեն տարի նվազագույնը կավելանա արժեզրկման մակարդակին համապատասխան: Այսօր կենսաթոշակառուն գործնականում ապահովվագրված չէ արժեզրկումից, քանի որ, ներկա դրությամբ, գոյություն չունի այնպիսի մեթոդ, որը հնարավոր կլիներ կիրարկել արժեզրկման պայմաններում»,- ընդգծեց Օթար Չիծիկաշվիլին:

Նրա պարզաբանմամբ, կենսաթոշակի նվազագույն ավելացումը պետք է համապատասխանի արժեզրկմանը, թեպետ բացառված չէ, որ առանձին դեպքերի համար ծագի հատուկ գործակիցների մշակման անհրաժեշտությունը:

«Նվազագույն արժեզրկման հետ միասին կլինի ինդեքսացիա, երբ երկրում կգրանցվի գների բարձր աճ: Այդ դեպքում, տոկոսային առումով կենսաթոշակին կավելացվի ավելի մեծ գումար: Այն դեպքում, երբ կգրանցվի որոշակի տնտեսական ճգնաժամ, կենսաթոշակը կավելացվի նվազագույն արժեզրկման համապատասխան»,- պարզաբանեց Չիծիկաշվիլին:

Ինչ վերաբերում է կենսաթոշակային բարեփոխման երկրորդ բաղադրիչին, ապա այն վերաբերում է ապագա սերնդի կենսաթոշակառուներին եւ դա պայմանավորված է մասնավոր կուտակումային մոդելի ներդրմամբ: Նշենք, որ այդ մոդելն արդեն փորձարկված է եւ հաջողությամբ գործում է մի շարք երկրներում:

«Գտնում ենք, որ Վրաստանը գտնվում է զարգացման այնպիսի փուլում, երբ նման համակարգի առկայությունը նշանակալից է: Քաղաքացիները պետք է ունենան կենսաթոշակային ավելի բարձր եկամուտ եւ նրանք չպետք է կախված լինեն միայն պետության կողմից տրվող սոցիալական կենսաթոշակից: Քաղաքացին կարող է ինքնուրույն ծրագրել իր կենսաթոշակային կեցությունը, հենց դրան է ուղղված մեր առաջարկած մոդելը»,- ընդգծեց էկոնոմիկայի նախարարության կենսաթոշակային բարեփոխման դեպարտամենտի նախագահ Օթար Չիծիկաշվիլին:

Կուտակումային կենսաթոշակային համակարգի կիրարկումը կսկսվի 2017 թվականի հոկտեմբերից: Կենսաթոշակային հիմնադրամ ներդրած գումարը քաղաքացու վախճանի դեպքում, 100 տոկոսով կփոխանցվի նրա ժառանգներին: «Կենսաթոշակառուի մահվան դեպքում, կենսաթոշակային հիմնադրամ փոխանցած նրա գումարը 100 տոկոսով կհանձնվի նրա ժառանգներին: Որոշակի չափորոշիչներ կմշակվեն նաեւ այն հաշվով, որ քաղաքացին մինչեւ կենսաթոշակային տարիքին հասնելը՝ կարողանա օգտվել այդ գումարից: Գլխավոր նպատակը մեկն է՝ հնարավորության սահմաններում երկարաձգել կենսաթոշակային հիմնադրամ գումարների փոխանցման ժամկետը, որքան ավելի երկարաձգվի, այնքան ավելի մեծ գումար կկուտակվի»,- նշեց Օթար Չիծիկաշվիլին:

Գործադիր իշխանության հավաստմամբ, սույն համակարգը բավականին ապահովագրված մեխանիզմ է: Կենսաթոշակային հիմնադրամի կառավարումը իրականացնելու է մասնավոր հատվածը: Դրա կառավարման գործին կառավարությունը չի միջամտի: Մյուս կողմից՝ այդ հիմնադրամի կառավարման եւ ներդրումային քաղաքականությունը, այսինքն՝ հնարավոր ռիսկերի պարամետրերը սահմանում են պետությունն ու կարգավորիչ մարմինը, միաժամանակ կիրականացվի ներդրումային գործընթացի վերահսկողությունը, ստուգումը, որպեսզի այդ գործընթացն իրականացվի սահմանված չափորոշիչների համաձայն: «Դա բավականին պաշտպանված համակարգ է, ինչը բացառում է սննկացման եւ գումարի կորստի վտանգը: Բնականաբար, միշտ կպահպանվի արժեզրկման հնարավորությունը, թեպետ այդ առումով հիմնադրամը կպաշտպանվի սահմանված մեխանիզմներով եւ գործնականում քաղաքացու ներդրած գումարի արժեզրկման վտանգը նվազագույնն է»,- պարզաբանեց կենսաթոշակային դեպարտամենտի ղեկավարը:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ